DocuSign Օրարի ՆՀ 46B6DB40-927B-4455-8FE5-CC5DBAF364CC

Հաշտարարության ծառայություններից օգվելու վճարների սանդղակ

Հելա Գ.Քլայբորն

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐ

Օրական դրույքաչափը՝ ..... 9,000 դոլար

Ներառում է պլանավորված օրվա ընթացքում մինչեւ 8 ժամ տեւողությամբ նախատեսված ժամանակ՝ նիստի համար, եւ մինչեւ 2 ժամ նախատեսված ժամանակ՝ նյութերի ուսումնասիրության եւ հետազոտական աշխատանքի համար:

Մասնագիտական այլ ծառայությունների համար նախատեսված ժամանակի (այդ թվում լրացուցիչ նիստերի, նախքան նիստը եւ դրանից հետո իրականացվող ուսումնասիրության եւ հետազոտական աշխատանքի եւ հեռախոսային կոնֆերանսների) համար կներկայացվի հաշիվ՝ 900 դոլար ժամավճարի չափով: Սրա մեջ կարող է ներառվել ճանապարհորդության համար ծախսված ժամանակը:

ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ՎՃԱՐ

Գործի վարման վճարը ներառում է դատավորների, փաստաբանների եւ ՎԼԱ այլ փորձագետների համազգային բացառիկ կազմի հասանելիությունը, մասնագիտացված ծառայությունները, այդ թվում՝ գործի ընթացքում իրականացվող ողջ վարչարարությունը, փաստաթղթերի մշակումը եւ ՋԱՄՍ (JAMS)-ի կոնֆերանսների անցկացման համար նախատեսված օժանդակ միջոցների օգտագործումը, ներառյալ՝ ոչ աշխատանքային ժամերին, ինչպես նաեւ տեղում տրամադրվող բիզնես աջակցությունը: Ոչ աշխատանքային եւ հանգստյան օրերի համար գանձվում են լրացուցիչ վճարներ:

Գործի վարման վճարը վերանայվում է այն դեպքերի համար, որոնք երկարաձգվում են նախապես պլանավորված աշխատանքային ժամանակահատվածից ավելի երկար:

Հաշտարարություններ

Յուրաքանչյուր կողմի համար 450 դոլարի չափով սկզբնական՝ վերադարձման ոչ ենթակա վճարը գանձվում է մասնագիտական ծառայությունների համար նախատեսված ժամանակի առաջին 10 ժամի համար:

Սկզբնական 10 ժամը գերազանցող ժամանակի համար՝ .....Մասնագիտական ծառայությունների վճարների 12%-ը

Բացահայտում, հատուկ մասնագետի ծառայություններ, ուղղորդումներ եւ գնահատումներ

Տե՛ս Անկողմնակալ հաշտարարի ընդհանուր վճարների անհատական սանդղակը

Անկողմնակալ հաշտարարի վերլուծության շրջանակում գտնվող հարցեր

Կապ հաստատեք ՋԱՄՍ-ի հետ վարչարարության եւ ծառայությունների արժեքի հետ կապված մանրամասների համար:

ՉԵՂԱՐԿՄԱՆ/ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍՈՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

	Չեղարկման / ժամկետի երկարաձգման ժամանակահատված	*Վճար*
1 օր կամ դրանից պակաս	30 օր կամ ավելի՝ նախքան նիստը	100%-ով ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ՝ բացառությամբ ծախսած ժամանակի մասով վճարի
2 օր	30 օր կամ ավելի՝ նախքան նիստը	100%-ով ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ՝ բացառությամբ ծախսած ժամանակի մասով վճարի
3 օր կամ ավելի	60 օր կամ ավելի՝ նախքան նիստը	100%-ով ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ՝ բացառությամբ ծախսած ժամանակի մասով վճարի
Ցանկացած տեւողության նիստերը	Չեղարկման / ժամկետի երկարաձգման ժամանակահատվածում	ԵՆԹԱԿԱ ՉԷ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ

Նիստերի ընթացքում չօգտագործված ժամանակի մասով վճարը ենթակա չէ վերադարձման:

Լսումների համար գանձվող վճարները, ներառյալ՝ Գործի վարման համար գանձվող բոլոր կիրառելի վճարները ենթակա չեն վերադարձման, եթե պլանավորված ժամանակը (կամ դրա մի մասը) չեղարկվում կամ երկարաձգվում է չեղարկման ժամանակահատվածում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Անկողմնակալ հաշտարարի ժամանակը հնարավոր է ուղղել մեկ այլ խնդրի:

Չեղարկման քաղաքականությունը գործում է, քանի որ նախապես ամրագրված եւ այնուհետեւ չեղարկված ժամանակը հիմնականում փոխարինման ենթակա չէ: Բոլոր այն դեպքերում, երբ վերադարձման ոչ ենթակա գումարի հարց է առաջանում, այն կողմը, որը պատճառ է հանդիսացել ժամկետի երկարաձգման կամ չեղարկման համար, պատասխանատվություն է կրում կողմերից գանձվող վճարների մասով:

Կողմերին դեպոզիտային գումարի պահանջ է ներկայացվում հնարավոր նախապատրաստական եւ հաջորդիվ իրականացվելիք աշխատանքների համար: Ցանկացած չօգտագործված մասնաբաժին ենթակա է վերադարձման:

Բոլոր վճարները ենթակա են վճարման մինչեւ հաստատման մասին գրության մեջ նշված ժամկետը: Վճարումը պետք է իրականացվի նախքան ծառայությունների մատուցումը: ՋԱՄՍ-ն իրավասու է չեղարկել Ձեր նիստը, եթե բոլոր կողմերը մինչեւ չեղարկման կիրառելի ամսաթիվը չեն կատարում վճարումները, եւ ՋԱՄՍ-ը գրավոր հաստատում է չեղարկումը:

ՋԱՄՍ-ի փորձագետները կարող են օգտվել իրավաբանի օգնականի ծառայություններից՝ կախված գործի բարդությունից: Անկողմնակալ հաշտարարի կողմից օգնական ներգրավելու մտադրության դեպքում կողմերն այդ մասին տեղեկացվում են: Օգնականի ժամավճարի մասով հաշիվ է ներկայացվում կողմերին՝ վճարի համաձայնեցված բաշխմանը եւ ՋԱՄՍ-ի քաղաքականությանը համապատասխան:

DocuSign Օրարի ՆՀ 46B6UB40-927B-4455-8FE5-CC5DBAF364CC

ՋԱՄՍ-ի ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՉԵՂԱՐԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գործի անվանումը՝ «Գլոբալ Մեդիքալ Սոլյուշնս» ընկերությունն ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարության

Գործի համարը՝ 1425032969

1. Մասնագիտական ծառայությունների վճարները

Այս հարցի առնչությամբ մասնագիտական ծառայությունների համար, որոնք ներառում են ուսումնասիրության եւ նախապատրաստական այլ աշխատանքների համար նախատեսված ժամանակը, նիստերի համար նախատեսված ժամանակը, նիստերի համար նախատեսված լրացուցիչ ժամանակը եւ ցանկացած լրացուցիչ ծառայություններ կամ աշխատանք, սակայն չեն սահմանափակվում դրանցով, կներկայացվի հաշիվ Անկողմնակալ հաշտարարի սովորաբար կիրառելի դրույքաչափով: Պլանավորված, սակայն չօգտագործված ժամանակի համար գանձված վճարները ենթակա չեն վերադարձման: Զելա Գ. Քլայբորնի մասնագիտական ծառայությունների համար վճարը կազմում է 9000 դոլար 8-ժամյա օրվա համար (գումարած ուսումնասիրության եւ հետազոտական աշխատանքի համար նախատեսված երկու ժամը). լրացուցիչ օգտագործված ամբողջ ժամանակի համար հաշիվ է ներկայացվում ժամը 900 դոլար հաշվարկով:

2. Լրացուցիչ վճարները

Ա. Գործի վարման վճարներ. կողմերից յուրաքանչյուրին կներկայացվի հաշիվ՝ 450 դոլարի չափով, որպես Գործերի վարման սկզբնական, վերադարձման ոչ ենթակա վճար: Տե՛ս խնդրում ենք կից ներկայացվող վերագնահատման վերաբերյալ քաղաքականության Վճարների սանդղակը:

Բ. Ծախսերի մասով հաշիվ է ներկայացվում ըստ դրանց արժեքի:

Գ. Ճանապարհորդություն. եթե անհրաժեշտ է կատարել ճանապարհորդություն, եւ այն ներառված չէ Անկողմնակալ հաշտարարին տրվող վճարներում, ապա ճանապարհորդության ժամանակի համար նախատեսված վճարի մասով ներկայացվում է հաշիվ՝ Անկողմնակալ հաշտարարի ժամավճարի չափով: Ճանապարհորդական ծախսերի մասով հաշիվ է ներկայացվում ըստ դրանց արժեքի:

Դ. Ուսումնասիրության եւ հետազոտական աշխատանքի համար նախատեսված վճարները. կողմերին ներկայացվում է հաշիվ՝ ըստ Անկողմնակալ հաշտարարի՝ ուսումնասիրության եւ հետազոտական աշխատանքի համար նախատեսված սանդղակի:

3. Չեղարկման եւ հետաձգման մասով քաղաքականությունը

Համաձայն ՋԱՄՍ-ի Վճարների սանդղակի՝ լսումների համար նախատեսված վճարները ենթակա չեն վերադարձման, եթե նիստը չեղյալ է հայտարարվում կամ հետաձգվում է ավելի ուշ, քան նիստի օրվանից 30 օր առաջ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ չեզոք կողմի ժամանակն ուղղվում է մեկ այլ խնդրի: Չեղարկման եւ հետաձգման համար նախատեսված վճարները կկատարի (կկատարեն) չեղարկող կողմ(եր)ը: Գործի վարման վճարները ենթակա չեն վերադարձման:

4. Վճարումը

Ա. Կողմերը համաձայն են մասնագիտական ծառայությունների համար նախատեսված վճարները եւ լրացուցիչ վճարները բաշխել հետեւյալ կերպ.

50/50. 50%՝ «Գլոբալ Մեդիբալ Սոլյուշնս»-ի կողմից, հասցեատեր՝ «McCabe & Hogan PC», եւ 50%՝ Պատասխանողի՝ Հայաստանի Հանրապետության

<u>Կառավարության կողմից՝</u> Անկողմնակալ հաշտարարի Վճարների սանդղակում նշված կարգով:

Բ. Յուրաքանչյուր կողմ համաձայն է վճարել ՋԱՄՍ-ի կողմից ստացման ենթակա հաշվարկված վճարների եւ ծախսերի իր մասնաբաժինը նիստից առնվազն 30 օրացուցային օր առաջ եւ կիրառելի վերջնաժամկետներին համապատասխան: Եթե այլ բան համաձայնեցված չէ, ապա ՋԱՄՍ-ը պատասխանատու չէ կողմերի միջեւ՝ վճարներին առնչվող համաձայնությունների համար:

Ստորագրելով ստորեւ՝ յուրաքանչյուր մասնակից ուղղակիորեն կամ իրավախորհրդատուի միջոցով սույնով հավաստում է, որ ամբողջությամբ կարդացել է համաձայնագիրը եւ համաձայն է այստեղ նշված բոլոր հարցերի կապակցությամբ: Սույն համաձայնագիրը յուրաքանչյուր կողմ կարող է ստորագրել առանձին:

Ստորագրություն՝

.....

Տպագիր անունը՝

Էդուարդ Աղաջանյան

Ում անունից՝

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ

Ամսաթիվ՝

6 նոյեմբերի 2020թ.

DocuSign Փաստաթուղթի ID՝ 46B6DB40-927B-4455-8FE5-CC5DBAF364CC

I. Մասնակիցները եւ ընթացակարգը

Կողմերը եւ ցանկության դեպքում նրանց ներկայացուցիչները հրավիրվում են ներկա գտնվելու հաշտարարության նիստին: Հաշտարարության այս նիստը տեղի է ունենալու տեսակոնֆերանսի միջոցով: Ոչ ոք չի կարող ներկա գտնվել կամ երեւալ տեսակապով կամ հեռախոսով՝ առանց կողմերի թույլտվության եւ հաշտարարի համաձայնության: Բոլոր մասնակիցները հաստատում են, որ իրենք մենակ են սենյակում, եւ ոչ ոք չի կարող լսել իրենց: Որեւէ մասնակից չպետք է տեսագրի կամ ձայնագրի հաշտարարության նիստի որեւէ մաս: Բոլոր մասնակիցները համաձայն են, որ օգտագործելու են միայն անվտանգ WiFi կամ Ethernet կապ՝ հաշտարարության նիստին վերաբերող բոլոր գործողությունների համար:

Նիստի ընթացքում հաշտարարը կարող է ունենալ համատեղ եւ առանձին հանդիպումներ կողմերի եւ նրանց իրավախորհրդատուների հետ: Եթե կողմը հայտնում է հաշտարարին, որ տեղեկությունը գաղտնի է փոխանցվում հաշտարարին, ապա հաշտարարը չպետք է բացահայտի տեղեկությունը: Եթե որեւէ մասնակից ցանկացած պատճառով լսում է իր համար չնախատեսված հաղորդագրություն, ապա տվյալ մասնակիցն այդ մասին պետք է անհապաղ հայտնի հաշտարարին: Կողմերը համաձայն են, որ հաշտարարը որեւէ կողմի անունից հանդես չի գալիս որպես փաստաբան կամ չի տրամադրում իրավական խորհրդատվություն:

Եթե որեւէ կողմ ցանկանում է ցանկացած պատճառով դադարեցնել իր մասնակցությունը, ապա նա կարող է անել դա՝ ծանուցելով հաշտարարին եւ մյուս կողմերին այդ մասին: Կողմերը կշարունակեն կապված լինել սույն

Համաձայնագրի գաղտնիության վերաբերյալ դրույթներով, ինչպես նաեւ կշարունակեն կապված լինել այն ծառայությունների դիմաց վճարելու վերաբերյալ իրենց պայմանավորվածությամբ, որոնք մատուցվել են մինչեւ տվյալ կողմի դուրս գալու պահը:

II. Բացահայտումը

Հաշտարարը, բոլոր կողմերը եւ փաստաբանը հաստատում են, որ իրենք բացահայտել են ցանկացած անցյալ կամ ներկա կապ կամ այլ տեղեկություն, որը ողջամիտ անձի կարծիքով կարող էր ազդել հաշտարարի անկողմնակալության վրա, եւ որ առկա չէ շահերի որեւէ բախում կամ շահերի առերեւույթ բախում:

Բացի այդ, հաշտարարը գործում է ՋԱՄՍ-ի հետ համատեղ: Ժամանակ առ ժամանակ ՋԱՄՍ-ը կարող է պայմանագրեր կնքել կորպորացիաների (ներառյալ ապահովագրական ընկերությունների), պետական մարմինների եւ այլ կազմակերպությունների հետ՝ վեճերի լուծման հարցերով մասնագետներին որոշակի տեղանքում, որոշակի տեսակի հարցի կամ վերապատրաստման համար կամ որոշակի ժամանակահատվածով հասանելի դարձնելու համար: Բացի այդ, ՋԱՄՍ-ի բնույթից եւ չափերից ելնելով, կողմերը պետք է ենթադրեն, որ ՋԱՄՍ-ի հետ աշխատող այլ Անկողմնակալ հաշտարարներից մեկը կամ մի քանիսը հնարավոր է՝ մասնակցել են արբիտրաժի, հաշտարարության կամ վեճերի լուծման այլ գործընթացի այս գործի շրջանակներում ընդգրկված կողմերի, փաստաբանների կամ ապահովագրողների մասնակցությամբ եւ կարող են դա անել նաեւ ապագայում: Ընդ որում, կողմերը պետք է տեղյակ լինեն, որ ՋԱՄՍ-ի ցանկացած Անկողմնակալ հաշտարար, այդ թվում՝ այս գործում հանդես եկող Անկողմնակալ հաշտարարը շահագրգիռ է ՋԱՄՍ-ի ընդհանուր ֆինանսական հաջողության մեջ: Հաշտարարը տեղյակ չէ այս հարաբերությունների որեւէ հայեցակետից, որը կարող է բախում առաջացնել կամ խոչընդոտել իրեն՝ այս գործում որպես հաշտարար հանդես գալուն: Կողմերն ընդունում են, որ այդ

գործոնները շահերի բախում կամ շահերի առերեւույթ բախում չեն կարող հանդիսանալ:

III. Գաղտնիությունը

Կողմերի, իրավախորհրդատուի եւ հաշտարարի միջեւ հաղորդակցումը խթանելու եւ վեճերի կարգավորումը հեշտացնելու նպատակով ներքոստորագրյալներից յուրաքանչյուրը համաձայնում է, որ հաշտարարության ամբողջ գործընթացը, այդ թվում՝ նաեւ տեսակոնֆերանսի եւ հաշտարարության ցանկացած գործողության ընթացքում տեղի ունեցած քննարկումները գաղտնի են: Հաշտարարության ընթացքում արված բոլոր հայտարարությունները վեճի լուծմանն ուղղված գաղտնի քննարկումներ են եւ արվում են առանց որեւէ կողմի իրավական դիրքորոշումը վնասելու եւ որեւէ դատավարության ընթացքում որեւէ նպատակի համար անընդունելի են: Առաջարկությունները, խոստումները, վարքագիծը եւ հայտարարությունները ա) ենթակա չեն բացահայտման երրորդ կողմերին՝ բացի այս գործընթացի մասնակիցների հետ փոխկապված անձանցից, եւ բ) գաղտնի են եւ որեւէ նպատակներով, այդ թվում՝ չեղարկման համար անընդունելի են՝ համաձայն Ապացույցների դաշնային կանոնների 408-րդ կանոնի եւ ցանկացած կիրառվող դաշնային կամ պետական կանոնադրության, կանոնի կամ ընդհանուր իրավունքի դրույթների:

IV. Հաշտարարի որակազրկումը եւ պարտավորություններից ազատումը

Յուրաքանչյուր կողմ համաձայնում է ձեռնպահ մնալ որեւէ հաշտարարի կամ ՋԱՄՍ-ի որեւէ աշխատակցի ցուցմունք տալուն հարկադրելու փորձից: Յուրաքանչյուր կողմ համաձայնում է չանել որեւէ փորձ՝ հարկադրելու հաշտարարին կամ ՋԱՄՍ-ի որեւէ աշխատակցի տրամադրել որեւէ փաստաթուղթ, որը տրամադրվել կամ ստեղծվել է ՋԱՄՍ-ի կամ հաշտարարի կողմից կամ այլ Կողմի կողմից տրամադրվել է հաշտարարին կամ ՋԱՄՍ-ին, այդ

թվում՝ տեսակոնֆերանսին վերաբերող որեւէ տեղեկություն: Կողմերը համաձայնում են զերծ պահել հաշտարարին եւ ՋԱՄՍ-ին երրորդ կողմերի կողմից սույն համաձայնագրից կամ հաշտարարությունից բխող հայցադիմումներ ստանալուց: Եթե ՋԱՄՍ-ը կամ հաշտարարը ստիպված լինի պատասխանել սույն հաշտարարության մեջ ներգրավված որեւէ կողմի հայցադիմումին, ապա այդ կողմին կներկայացվի հաշիվ՝ պատասխանի համար ծախսված ժամանակի եւ գումարների համար: Կողմերը համաձայնում են, որ ո՛չ հաշտարարը, ո՛չ էլ ՋԱՄՍ-ը հաշտարարությանը կամ հաշտարարության առարկային վերաբերող որեւէ արբիտրաժային կամ դատական գործընթացում պարտադիր կողմ չեն: Ո՛չ ՋԱՄՍ-ը, ո՛չ դրա աշխատակիցները կամ գործակալները, այդ թվում՝ նաեւ հաշտարարը որեւէ կողմի առջեւ պատասխանատվություն չեն կրում սույն համաձայնագրով նախատեսված՝ հաշտարարության հետ կապված որեւէ գործողության կամ անգործության համար:

V. Գրանցված տվյալները

Կողմերի կամ իրավախորհրդատուի կողմից հաշտարարին տրամադրված ցանկացած փաստաթուղթ, այդ թվում՝ տեսակոնֆերանսի վերաբերյալ տրամադրված փաստաթղթերը ոչնչացվում են ՋԱՄՍ-ի կողմից հաշտարարության ավարտից 30 օր հետո, եթե կողմերն այլ ցուցում չեն տալիս ՋԱՄՍ-ին:

Ում կողմից՝
Էդուարդ Աղաջանյան

.....

Ում անունից՝
Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ
Ամսաթիվ՝
6 նոյեմբերի 2020թ.